

ԻՍՐԱՅԷԼԻ ԿՐՕՆԻՑ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԱՅՑԵԼԷ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ամեն. Տ. Քորզոմ Արքեպս. Մանուկեան ի տես պատերազմի սարսափներու, իր աղօթքները կը մատուցամէ խաղաղութեան համար:

Չորեքշաբթի, 21 Նոյեմբերին, Իսրայէլի Կրօնից մախարար՝ Վսեմ. Աւներ Ծաքի պաշտօնական այցելութիւն տուաւ Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Քորզոմ Արքեպս. Մանուկեանին:

Վսեմ. Նախարարին կ'ընկերանային Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն՝ Տրք. Նիսսիմ Տամմա, Նախարարութեան Քրիստոնէական բաժանմունքի Տնօրէն՝ Պր. Ռարի Մոր եւ Նախարարութեան Արեւմտեան Ափի Կրօնական հարցերու պատասխանատու՝ Պր. Ծմուէլ Համպրիկը:

Իսրայէլի Նախարարը Պատրիարքարանի մուտքին դիմաւորուեցաւ Ս. Աթոռոյս մօրըմտիք Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեանի կողմէ, եւ առաջմօրդուեցաւ Պատրիարքարանի դահլիճ:

Վսեմ. Աւներ Ծաքի Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր Գահակալութեան առթիւ Իսրայէլի Կառավարութեան պաշտօնական շնորհաւորութիւնները յայտնեց:

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը շնորհակալութիւն յայտնեց Վսեմ. Նախարարին եւ շեշտեց որ մերկայիս բոլորի հիմնական մտահոգութիւնը պատերազմի սպառնալիքն է, որուն հետեւանքները աղիտալի պիտի ըլլան:

« Պատերազմները ոչ որի համար բարիք են », Սրբազան Հայրը ըսաւ:

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը խաղաղութեան մաղթանք ըրաւ որ աշխարհի այս շրջանը, որ մերկայիս ծանր ու տագմապալի օրերու մէջ կը գտնուի, պատերազմի թատերաբեմ վրէժը չը դառնայ:

« Մենք մեր եկեղեցիին մէջ ամէն օր կ'աղօթենք խաղաղութեան համար », ան ըսաւ:

Վսեմ. Աւներ Ծաքի համակարծիք էր Սրբազան Հօր եւ յուսալից՝ որ աւելի խոհեմ համագործակցութեամբ պատերազմի վտանգը կը հեռանայ եւ խաղաղութիւնը կը տիրէ այս երկրին մէջ:

Կրօնից Նախարար ըմտրուելէն ետք, Վսեմ. Աւներ Ծաքիի Առաջին այցելութիւնն էր Երուսաղէմի Հայոց Պատրիարքին:

Ընդունելութիւնը տեսց մօտաւորապէս կէս ժամ: